

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐ ՄԻԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Ա. - ՄՈՒՐԱՏ ՌԱՓ. ՎՐԺՐՆ - ՎԵՆԵՏԻԿ

Տարւոյս Փետրուար 25ին և 27ին տեղի ունեցան Թատերական ամենայնոյ ներկայացումներ բարեկենդանի շրջանին: Միաբանութեանս Հայրերէն և աշակերտութեանս և Վենետիկ ու Լիտուի ցանցաւ հայ գաղութէն՝ զատ կը նշմարուէին նաեւ Փատուայէն, Միլանէն և Հռոմէն հայեր և մանաւանդ հայ ուսանողներ:

Հակառակ որ բարձր և դժուարին էին հայերէն և իտալերէն կատակերգական կտորները զորս բեմագրեցին Վարժարանիս սաները, սակայն պէտք է ուրախութեամբ և գոհունակութեամբ յայտարարենք թէ իսկապէս ակնկալուածէն վեր էր անոնց ունեցած յաջողութիւնը, շնորհիւ իրենց անձնուէր ջանքերուն և զոհողութեան, ինչպէս առաջնորդութեան վաստակաւոր Հայրերուն, որոնք, հետեւելով հարկւրաւ մեայ նուիրագործուած աւանդութեան մը, կ'ուզեն տալ միշտ ուսումնական զարգացման հետ կարեւոր դերը՝ որուն արժանի է բեմը՝ բարոյական ու մշակութային տեսակէտներով:

Հայկերէն ներկայացման կատակերգութիւնը որ տեղի ունեցաւ 25 Փետրուարին էր Պերթոն հեղինակին «Գաղտնի ուստիկան»ը արդի կեանքէն, չորս արարով, թարգմանուած վարժարանին յարգելի Ուսումնապետ Հ. Աթանաս Քեսէճեան Վ.էն և առաջին անգամ այդ օր բեմագործուած, ուժեղ բարոյականով նիւթ մը, խոր ծաղրերով և հանգոյցներով, ուր նրբամտութիւն և հնարագիտութիւն, միամտութիւն և խաբէութիւն, իրարու դէմ կ'ոգորէին, աւարտելով արգարութեան յաղթանակով:

Ահա կատակերգութիւնը իր ընդհանուր գծերով. - Իշխանի մը դրամակը կողոպտուած է. բնակաբար կը ձերբակալուի և բանտ կը նետուի արկղակալը՝ որ անմղ է: Ասոր պաշտպան կը հանդիսանայ ուսանող մը, որ, հակառակ իր անփորձ տարիքին, արթուն և հնարամիտ նկարագրով, ինքզինք ոստիկանութեան տրամադրութեան կը յանձնէ և շնորհիւ իր բացառիկ

աջողակութեան կը նշանակուի գաղտնի ոստիկան և կը նուիրուի յիշեալ խնդրին մութ ծաղրերն որոնելու, և վերջապէս կը յաջողի ի յայտ բերել գողութեան բուն հեղինակները. խաբէբայ մը՝ որ կեղծ տիպոյններով ինքզինքն աղանաւան ու բարեկամ կը ձեւացնէ յիշեալ իշխանին, իր թարկարթին մէջ ձգած նոյն ինքն իշխանին բարեսիրտ բայց միամիտ զաւակը՝ բարոյապէս կ'ապականէ ու պարտքեր ընել կուտայ, որոնցմէ ազատելու համար իշխանին զաւակը մինչեւ կը համարձակի հօր դրամարկը կողոպտել:

Ոստիկանին մերկացումներուն վրայ խաբէութեան զոհ եղած իշխանիկը կը խոստովանի իր մեղապարտ արարքը և ինքզինքն անոր կը յանձնէ: Խաբէբան ալ իր կարգին մերկացուած՝ կը փորձէ փախչիլ, սակայն կը հետապնդուի և իր յանդգնութեան զոհ կը դառնայ, ու վերջապէս կը փրկուի զրպարտուած անմղը:

Գաղտնի ոստիկանի դժուարագոյն դերն ամենափայլուն կերպով ներկայացուց Լուգուիկ Պալճեան, դերասանական բացառիկ ձիրքերով տղայ մը, որ բեմին վրայ քանիցս ծափեր խլեց խանդավառուած հասարակութենէն:

Նոյնքան դժուար դերը խաբէբային յաջողութեամբ կատարեց Մամաս Գոզանլեան, և իշխանի զաւակինը՝ Զաւէն Մնտիկեան իսկապէս յուզիչ խաղարկութեամբ:

Գարձեալ կարեւոր դերեր խաղացին գովելի կերպով Գրիգոր Վէյվէլեան՝ իբրեւ իշխան, Առանձար Գասպարեան՝ Ոստիկանապետ, Հռիփարտ Փափազեան՝ հաւատարիմ ծառայ, Անդրանիկ Գարապաճազեան՝ ոսկիկանատան ծառայ, որ կատակերգակի իր յատուկ ձեւերով շարունակ զուարճացուց հասարակութիւնը: Երկրորդական դերերու մէջ մեծապէս յաջող եղան Յովսէփ Աշրաֆեան, Յակոբ Քերոբեան, Վահան Բաղարճեղեան, Հայկ Ալթունեան, Խաժակ Թանուրճեան, Լուգուիկ Կիրակոսեան, Լեւոն Պէհնիլեան, գրեթէ բոլորն ալ երկու բարձրագոյն դասարանի աշակերտներ:

— 79 —

Իսկ « Պանտալոնի մաշր կամ ախանջապուրը » մէկ արարով զաւեշտը յաջողութեամբ բեմագրեցին փոքր դասարանի աշակերտներ, Սերօրէ Փափազեան, Գէորգ Գէորգեան, Նուսրա Միհրանեան, Յարութիւն Եհաննէճեան և Հրայր Թերզեան:

Փետրուար 27ին տեղի ունեցան խալիսիկ ներկայացումները, որոնց ներկայ էր խոնուած ամբոխ մը բարեկամներու և ծանօթներու, վարժարանին ուսուցիչներու, ինչպէս նաեւ քաղաքիս ճրանսական հիւպատոսը, Ուխտիս Ընդհ. Աբբասյան և Հայրեր:

Նախ բեմագրուեցաւ Անտոն Կանտինոյ հեղինակին երեք արարով կատակերգութիւն մը « Ուարաիլան », աս ալ արդի դարու կեանքին վերաբերեալ նիւթ, ուր Ռաթափլան բժիշկը խենթացած է հետեւանքով իր պրպտութիւններուն երիտասարդացման գաղտնիքը գտնելու:

Ռաթափլանի « Երիտասարդութիւն » հաստատութիւնը սակայն անուն հանած է և մեծ շահութուէ է անոնց՝ որ արգելափակած խենթ Ռաթափլանը՝ օգտուել կ'ուզեն անոր հեղինակաւոր անունով՝ կարգ մը անմիաներէ որոնք թշուառօրէն կ'ողբան իրենց կորսնցուցած երիտասարդութիւնը և ի գին խոշոր գումարներու վերջստանալ կը խնդրեն զայն:

Շահաբեր հաստատութիւնը ոտքի վրայ բռնելու համար մէկը կը կեղծէ խենթացած Ռաթափլանի գերը և հոտ է որ կատակերգութեան զուարճալի դրուագները կը յաջորդեն իրարու, մինչեւ որ ոստիկանութիւնը կը մերկացնէ խաբէական կազմակերպութիւնը:

Կատակերգութեան գլխաւոր դերը՝ կեղծ Ռաթափլանի՝ կատարեց մեծ ձեռնհասութեամբ վարժարանին հսկիչը՝ Ռեցոյ: Նոյնքան յաջող կերպով փայլեցան և արժանի ծափեր խլեցին անխոր միւս գլխաւոր դերակատարները՝ Վահան Բաղարճեղեան, Յովսէփ Աշրաֆեան, Մանուկ Եթմիսեան, Լուգուիկ Պալճեան, Մանուկ Եթմիսեան, Հռիփարտ Փափազեան, Յակոբ Քերոբեան, Անդրանիկ Գարապաճազեան և Առանձար Գասպարեան:

Իբրեւ զաւեշտ բեմագրեցին Գոթթուէնիի « In pretura » (= Գատարանին մէջ) ծանօթ ծիծաղաշարժ կտորը, ուր մեծապէս յաջող հանդիսացան բացի վարժարանին հսկիչ Ռեցոյէն՝ Ա. Գասպարեան, Վ. Բաղարճեղեան, Յովսէփ Աշրաֆեան, Լ. Պալճեան, Զ. Մնտիկեան, Յ. Աշրաֆեան, Մ. Գոզանլեան, և Յովսէփ Աշրաֆեան:

սէփ Սըվաճեան. ինչպէս իրենց համը դերերուն մէջ Տիգրան Ալեքսանեան և Մ. Եթմիսեան:

Միջանկեալ բեմագրուեցաւ Ա. արարը Մոլիերի « Misanthrope »ին, որուն երեք դերակատարները Լ. Կիրակոսեան, Մ. Եթմիսեան և Հ. Ապոյեան մեծապէս ծափահարուեցան և յատուկ ուրախացութիւն ընդունեցան ճրանսական հիւպատոսէն՝ իրենց յաջող և անսխալ փրանսերէնին համար:

Զաւեշտէն վերջ ներկայացուեցաւ երաժշտական զուարճալի կտոր մ'ալ Պերնինի « Խաղաղիստրիակն դասը », ուր բաց ի խմբերգի մասը զաղխուրեակն դասը, ուր բաց ի խմբերգի մասը նախկող աշակերտներէն՝ յատուկ դեր ունէին Ս. Փափազեան, Հ. Թերզեան և Գ. Գէորգեան:

Գարձեալ միջանկեալ պահերուն աշակերտներու խմբերգը երգեց միաձայն քանի մը սիրուն երգեր Պէթովէնէն և ուրիշներէ, Վարժարանին երաժշտութեան ուսուցիչ Tagliapietraի առաջնորդութեամբ և զաշնակի ընկերակցութեամբ: Կ'արժէ յիշել նաեւ Փրանսերէն շնորհալի արտասանութիւնները Մարտիրոս Մեծմօրեան փոքրիկին որ մեծապէս գնահատուեցաւ ներկաներէն:

Հարկ չկայ ըսել թէ յոբան մեծ է մեր գնահատութիւնը և ուրախացութիւնը մեր սիրելի սաներու այս նոր յաջողութեանը համար՝ որուն արձագանքը տեսանք մեծ գովեստներով տեղական լրագիրներուն մէջ: Մեր սրտագին ուրախակցութիւնը նաեւ Վարժարանին վաստակաւոր Հայրերուն:

ԽՍԲ.

Բ. - ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎՐԺՐՆ. ՍԵՒՐ - ԲԱՐԻՋ

Մուրատեան վարժարանն այս տարի ալ, Փետրուար 27-ի կիրակին, Թատերական փայլուն ներկայացումներով բարեկաջայութեան գեղեցիկ և անմոռանալի ժամեր և յիշատակներ հաղորդեց: Խուռն բազմութիւն մը, մասնաւորապէս սաներու ընտանիքները, լեցուցած էին վարժարանին « Պիշիթթալեան » Թատերասրահը:

Ժամը 3 էր երբ սկսաւ բեմագրութիւնը « Խաղաղաւոր » բարոյական յուզիչ տրամին՝ աղապին շրջանակով: Արդէն խորագիրը կը պարզէ նիւթը որուն շուրջ կը գտնար տրամը: Այնուհետեւ հետեւ հոգեկան տաղանապեր, կորուստներուն վրայ գողութիւն, սուտեր, վերջապէս պարտքեր, ամօթալի դատապարտութիւն և բանտի բաւարան: Ընտանեկան բոյնի քայքայումին մէջ դեռ բարեգութ ձեռքեր, ի գին մեծ զոհողու-

թիւներու, կը ջանան փրկել կործանածը՝ վաշխառուներու բերանը դրամով փակելով: Մանր յուզիչ տեսարաններէ վերջ սփոփանքի կայծ մը կ'երեւի ցաւագին զղջումին մէջ խաղամուրին՝ որ կը մեռնի իր բարի հօր և եղբօր գլխոս բազուկներուն վրայ: Այս վերջին պատկերը խորապէս յուզիչ էր:

Ինչպէս նկատեց յետոյ հրաւիրեալներու բազմութիւնը, նիւթը իր հոգեկան խոր անցքերով վեր էր աշակերտներու տարողութեան, և սակայն, շնորհիւ մեծ ճիգերու, անոնք յաջողեցան փայլել բոլոր գերերուն մէջ. այսպէս, Դաւիթ Խոջամիրեան՝ խաղամուրի, և յետոյ կարգաւ միւս գլխաւոր գերերուն մէջ Գրիշա Յովսէփեան, Պերճ Զանջերեան, Գեորգ Այսնեան, Վարուժան Պողաճեան և Կարպիս Աբովեան:

Հայերէն տրամին յաջորդեց «I due Spazzacchini» իտալերէն երգախառն կտորը «Երկու ծինեղոյ մաքրողներ», զոր ներկայացուցին Կարապետ Գազանճեան և Պողոս Իսրայէլեան, երկուքն ալ հանդիսականներու կողմէ խանդավառօրէն ծափահարուելով իրենց ունեցած մեծ յաջողութեան համար:

Նոյնքան յաջող էր ներկայացումը Offenbach-ի «Երկու ձկնորսները» «Les deux pêcheurs» զուարճալի և հոգեբանական խաղին, որուն մէջ փայլուն գերեր կատարեցին Մանուկ Սէֆերեան, Պերճ Զանջերեան և մանաւանդ Ս. Պողոսեան: Այս ալ երգախառն:

Վերջին ներկայացումն էր A. Tribault-ի «Le parapluie de Don Quichotte» «Տօն Քիշօթի հովանոցը», նոյնպէս երգախառն, գերակատարները՝ վարժարանին փոքրիկները՝ շնորհալի և մեծապէս հաճելի գերքեր առած էին սպանիական տարազներուն մէջ՝ ինչպէս նիւթը կը պահանջէր, որ իր խորքին մէջ ընկերսիրական ազնիւ պատկեր մը կը բեմադրէր:

Բեմադրութիւնն աւարտած էր, տեսնելու էր ներկաներուն հոգեկան գոհունակութիւնը, մանաւանդ այդ սիրուն, մտացի և առողջ աղոց ծնողներունը:

Անշուշտ այդ ամէն յաջողութիւն մեր հայ աղաքը իրենց կրթարանին կը պարտին, Տեսչութեան անխնայ ջանքերուն և անոնց գործակից Ուսուցիչներուն, որոնց մէջ անշուշտ մեծապէս արդիւնաւոր է և շնորհաւորելի երաժշտապէս Պրն. Գ. Ալեմշահ:

Խնդակցութեան աւելի բան մ'է որ կ'ուզենք յայտնել Միխիթարեան ազգանուէր Հայրերուն, մեր սրտի ամենախոր երախտագիտութիւնը, որովհետեւ անոնք մեր ազգին զաւակները լաւ կը կրթեն և հայ կը կրթեն:

ՆԵՐՍԷՍ ՄԸ

Գ. - ՄԻԽԻԹ. ՎԱՐԺԱՐԱՆ - ՀԱՆԷՊ

Փետ. 27ին, կիրակի օր, վարժարանին աշակերտութիւնը Թատերական իր անդրանիկ ներկայացումը տուաւ ներկայութեանը ազգայիններու հոծ բազմութեան մը՝ որոնց նախագահ բազմած էր Արհի Գերպ. Հինտիէ՝ տեղւոյս Հայ Կաթողիկէ վիճակաւորը:

Հանդիսականներու ընդունելութիւնն և կարգապահութիւնը յանձնուած էր վարժարանին աշակերտաց:

Գլխաւոր նիւթը որ բեմադրուեցաւ «Հուպիտներ» յուզիչ տրամն էր, որուն մէջ մեծապէս փայլեցան Կ. Գարայեան և Պ. Նաճարեան, ինչպէս նաեւ Թ. Ոսպիկեան, Ֆ. Մինասեան և Զ. Քեհաճեան:

Ապա «Պայքար Հրեշտակի և Սատանայի» բարոյական և կրթիչ կտորը, որ խոր և շնորհապատկար թողուց բոլոր ներկաներուն վրայ: Գլխաւոր գերակատարներն էին Ս. Քիւփէլեան, Յ. Իւզպաշեան և Ռ. Միխիթեան:

Հուսկ բեմադրուեցաւ «Բարեկեցականի վերջին իրիկունը» ծիծաղաշարժ պատկերը որ շատ զուարճացուց ներկայ բազմութիւնը:

Բժիշկի և ծառայի գերերուն մէջ մեծապէս յաջող էին երկու Գասարճեանները: Նոյնպէս փայլուն հանդիսացան Սապապղեան, Եղորդ պեան, Ճէսուրեան, Աւագեան և Սաթմաճեան պատանիները, արժանանալով ներկաներուն խանդավառ ծափերուն:

Մեծապէս հաճելի անցան միջնարարներու պահերուն կատարուած Հայկական պարերն և երգախառն մենախօսութիւնները:

Ուրախ ենք որ Միխիթարեան Հայրերը հայաշատ կեդրոնին մէջ ցոյց կու տան իրենց ջանքերուն պտուղը, Թատերական բեմին վրայ իսկ դրոշմելով բարոյական և ազգային ուժեղ նկարագիր մեր զաւակներուն: Կարօտով պիտի սպասենք եկող տարւոյն ներկայացումներուն:

ՀԱՆԷՊՅԻ



Հ. Միքայէլ Յովնանեան. — Այգեկութիւն (Բ. Նորիկեան)	54	P. M. Hovhannessian — «Aïkekoutk» (Vendange) (par B. Nourikian)	54
Հրաչ Բախարեց. — Զուարթնոց տարեգիրք (Հր. Բալուեան)	55	H. Katcharentz. — «Zuartnotz» almanach (par H. Palouian)	55
Հրաչ Բախարեց. — Նախերգանք (Մ. Թէօլէօլեան)	56	H. Katcharentz. — «Prélude» (par M. Tölölian)	56
Գիտական		Science	
Մ. Վ. Քիոտոյ. — Սուրբ Գերեզմանի տաճարին պահպանութեան խնդիրը (Թրգմ.)	65	M. V. Chiodo. — Problèmes de conservation de l'église du St. Sépulture (par Luigi Marangoni)	65
Հայ Մամուլ		La Presse Arménienne	
Հ. Ե. Փ. — (Նոր գրքեր ու թերթեր) .	60	P. E. P. — (Livres et Revues).	60
Հայկական արձագանգ		Echos Arméniens	
Հ. Մ. Ճանաչեան. — Գրիգոր Պետրոս Ժե. Կաթ. Պատրիարքի այցելութիւնը Բարիզայ գաղութին	68	Djanachian P. M. — La Visite de S. B. Grégoire Pierre XV Patriarche à la Colonie Arménienne de Paris	68
Կ. Խրայեան. — Լիոնահայ գաղութին .	74	C. Khrayan. — ... à celle de Lyon	84
Թատերական ներկայացումներ Միխիթարեան վարժարաններուն մէջ.		Représentations théâtrales dans les Collèges des PP. Mekhitharistes	
Խմբ. — Մուրատ — Ռաֆայէլեան Վարժարան — Վենետիկ	78	Réd. — Moorat — Raphaël - à Venise	78
Ներկայ. — Մուրատեան Վրժ. — Բարիզ .	79	Présent. — S. Moorat - à Paris.	79
Հարկայի. — Միխիթ. Վրժ. — Հալէպ .	80	Alep. — Collège Mékhit. - à Alep.	80

ԲԱՅՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ « Բ Ա Զ Մ Ա Վ Է Պ »

ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ — ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՑԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ
որ 1938 թուականով իր գոյոշքեան 96* տարին կը քեռակոխէ:

Տարեկան բաժնեգինն է՝ 12 ֆրանք ԶՈՒՅՆԵՐԱԿԱՆ կանխիկ. կամ համապատասխան իւրաքանչիւր պետութեան զրամով՝ օրուան սակին համեմատ:

Կրթական հաստատութեանց, դպրոցներու, ակումբներու, ընթերցարաններու, ինչպէս նաեւ ուսանողներու համար թերթս կը շնորհենք կես գնով:

Բացառիկ թիւ (100ամեակ Մ. Ռաֆ. Վրժ.) Ա. հատոր 9 գ. ֆ. ուղեծախսով

» » » ընդ մամուլ Բ. » 9 » »

» » » Ա. և Բ. հատորները միասին 16 » »

Յօդուած, թղթակցութիւն, բաժնեգին՝ զրկել ուղղակի հետեւեալ հասցէին.

Réd. «PAZMAVEB»

St Lazare

VENISE (Italie)